ԱՄԵՆԻՑ ԱՌԱՋ՝ ՄՏԱԾԵԼ ՍՈՎՈՐԵՑՆԵԼ

Մեր թղթակցի հարցերին պատասխանում է միջնակարգ և մասնագիտական կրթության նախարարության հանրապետական ուսումնամեթոդական կաբինետի ֆիզիկայի մեթոդիստ է. Լ. ՄԿՐՏՈՒՄՅԱՆԸ։

— **ԹՂԹ.— Դուք երկար տարիներ աշխատել եք դպրոցում, ի՞նչ կարող եք ասել ներկայիս դպրոցական համակարգի մասին։**

է. Մ. Այո՛, սկսած 1961 թ. օգոստոսի 15-ից, երբ ես Բաքվի մանկավարժական ինստիտուտի ֆիզիկայի ֆակուլտետը ավարտելուց հետո նշանակվել էի Շամխորի շրջանի Բաղա գյուղի միջնակարգ դպրոցում, մինչև օրս աշխատում եմ ֆիզիկայի ուսուցիչ, նույնիսկ այն տարիներին, երբ աշխատում էի Հայկական Սովետական Հանրագիտարանում և ՀՍՀ ԳԱ կիբեռնետիկայի և ռադիոէլեկտրոնիկայի խորհրդի գիտաքարտուղարն էի, չէի թողել դպրոցը։ Աշխատել եմ խորհրդային ուսումնական համակարգերի համարյա բոլոր տիպերում և թվում է՝ լավ գիտեմ այդ համակարգերը, ուստի ինձ իրավունք եմ վերապահում ասելու, որ ժամանակակից ուսուցման համակարգը պետք է արմատապես վերափոխել. այն իր մեջ արտացոլել է կառավարման վարչահրամայական մեթոդի բոլոր թերությունները։

ԹՂԹ.— Ինչպիսի՞ն եք տեսնում մեր ապագա դպրոցը։

է. Մ.— Ավելի գործնական։ Պարզաբանեմ ասածս։ Տարիների մանկավարժական իմ փորձը համոզում է, որ եթե երեխան 12—13 տարեկան է, պետք է նրան սովորեցնել այն, ինչ ինքը ցանկանում է սովորել, հետևապես պետական պարտադիր ուսուցումը պետք է ավարտել 6-րդ կամ 7-րդ դասարանում, սակայն սա չի նշանակում, որ այնուհետև երեխան պետք է մեծանա անուսում։ Ոչ, նա ուսում կստանա իր ուզած մասնագիտությամբ, խորացված ձևով, այսինքն, դպրոցները իրենց նպատակներով, սկսած 6—7 դասարաններից, պիտի տարբերվեն իրարից և այն էլ շատ ցայտուն կերպով։ Իսկ ինչ մնում է երեխային մի տիպի դպրոցից մյուսը տեղափոխելու խնդրին, ապա այն կարելի է լուծել երկու դպրոցների մանկավարժական կոլեկտիվների միջոցով, հատուկ կարգով։ Մեր ապագա դպրոցը պետք է լինի մի ուրույն տնտեսություն, որը կկարողանա ինչ-որ չափով հոգալ նաև իր տնտեսական հոգսերը, նյութական բարիքներ ծնող աշխատանքը այդ դպրոցի հատկապես բարձր դասարաններում պետք է սերտ կերպով շաղկապվի ուսուցման հետ։

ԹՂԹ.— Ինչքան ես գիտեմ, դուք միշտ էլ լավ աշխատող եք եղել. ինչո՞ւ ղեկավար պաշտոններ չեք զբաղեցրել։

է. Մ.— 1964—1966 թթ. ես աշխատել եմ Բաքվի Հայատառ (այս տերմիններ հիմա շատերն են օգտագործում, բայց դրա հեղինակներից մեկն էլ ես եմ), «Կոմունիստ» թերթում, ինձ առաջարկում էին անցնել կուսակցության շարքերը և գնալ սովորելու Մոսկվայի բարձրագույն կուսակցական դպրոցում, սակայն ծնված լինելով Արցախում, ապրած Ադրբեջանի հանրապետությունում, իսկ 1966-ին մի շարք հայ մտավորականների հետ միասին ես բռնագաղթվելով Երևան, գիտեի թե ինչ է կուսակցությունը և նրա տիրապետությունը (այդ մասին կարող եք կարդալ իմ հոդվածը՝ «Իրերը իրենց անուններով», «Հայք» շաբաթաթերթ, հոկտեմբերի 26, 1990 թ.), ուստի ես համոզված անկուսակցական էի։ Իսկ դուք գիտեք, որ ղեկավար պաշտոնների առաջ են քաշվել միայն կոմունիստները, ես կամավոր զրկվել էի այդ «առավելությունից» և, փառք աստծո, խիղճս հանգիստ է։

ԹՂԹ.— Ինչ եք կարծում, մեզ մոտ ուսումը կարո՞ղ է դառնալ վճարովի, թե ոչ։

է. Մ.— Նախ նշեմ, որ ուսումը միշտ էլ վճարովի է եղել։ Ինչ տարբերություն՝ պետությունը ծնողների աշխատավարձից շատ պահումներ է կատարել և «հոգացել» ուսուցման ծախսերը։ Սակայն տարիները ցուցադրեցին այդ ամբողջ համակարգի թերությունները ու անկարողությունը։ Իմ կարծիքով, հատկապես բարձր դասարաններում, այսինքն ոչ տարրական ուսուցման դասարաններում և բուհերում ուսուցումը պիտի լինի վճարովի, անկախ այն բանից, թե այդ վճարումը կկատարի ծնողը, համայնքը, հատուկ դեպքերում նաև պետությունը և այլն։

ԹՂԹ.— Չե՞ք կարծում, որ այդ դեպքում կստեղծվի զուտ կամ կիսազուտ ուսուցիչների մեծ բանակ։

է. Մ.— Ոչ, չեմ կարծում։ Նախ ասեմ, որ այժմ շատ քիչ ուսուցիչներ են աշխատավարձով ապրում։ Ուսուցչությունը ներկայումս սիրողական բնույթ ունի, քանի որ ուսուցիչը չի կարող իր մասնագիտությամբ կերակրվել, ուստի այս փոփոխությունները կատարելիս անպայման պետք է բարձրացնել ուսուցչի աշխատավարձը, սահմանափակել մի դասարանում սովորողների քանակը (պարտադիր ուսուցման դասարաններում մինչև 15, իսկ բարձր դասարաններում՝ 10 սովորող)։ Քանի որ խորհրդային երկրում խախտված է եղել գնագոյացման էությունը, ուստի ուսուցման ասպարեզում պետք է ճշգրտել նաև այն։

ԹՂԹ.— Ներկայումս շատ է խոսվում և գրվում ազգային դպրոցի մասին։ Ի՞նչ կարող եք ասել այդ ուղղությամբ։

է. Մ.— Իհարկե, ուսուցման համակարգը պետք է լինի ազգային։ Սա չի նշանակում, որ պետք է պարփակվել միայն ազգային սահմաններում, մենք պետք է կարողանանք համաշխարհային առաջավոր փորձը ստեղծագործաբար մտցնել մեր ուսուցման համակարգը, թե չէ, մենք ավելի կխորացնենք ճգնաժամային վիճակը մեր դպրոցներում։ Դպրոցը ազգ ստեղծելու համար ամենակարևոր օղակն է, ուստի մենք պետք է ունենանք համաշխարհային բոտանդարտին համապատասխանող, ուժեղ դպրոց, այլապես մեր դրպրոցը կնմանվի «տեր Թոդիկի դրպրոցին»։

(Շարունակությունը՝ 3-րդ էջում)

(Սկիզբը՝ 2-րդ էջում)

ԹՂԹ.— Գիտեմ, որ վերջին տարիներին շատ եք եղել Արցախի դպրոցներում, ի՞նչ կարող եք ասել այդ մասին։

է. Մ.— Արցախում, իհարկե, շատ եմ եղել, բայց, ցավոք սրտի, երա դպրոցներում՝ համեմատաբար քիչ։ Հանգամանքներն այնպիսի էին, որ ժամանակ չէր մընում շատ դպրոցներ այցելել։ Բայց բանն այդ չէ, Արցախի դպրոցները ունեն այն բոլոր թերությունները, որոնք ունեն նաև, օրինակ, Երևանի դպրոցները, դեռ կասեի ավելին՝ ազգային դաստիարակության հարցերը երկար տարիներ այնտեղ չէին շոշափվում, և ահա, դրանից բխող բոլոր հոգսերը...

Սակայն պետք է նշեմ նաև, որ Արցախի դպրոցներում նախնակառուցությունը ավելի է պահպանվել և սերը ուսման նկատմամբ սովորողների մեջ դեռ մնում է, սակայն այդ չի նշանակում, թե Արցախի դպրոցները արմատական փոփոխություններ չեն պահանջում։ Չպետք է մոռանանք նաև այն հանգամանքը, որ եկեղեցու իսպառ բացակայության պայմաններում դպրոցը միակ օջախն է եղել Արցախում, որ պահել է ազգային ավանդույթները։

ԹՂԹ.— Ի՞նչ կարող եք ասել, խորհրդարանում առաջադրված լուսավորության նախարարի նոր թեկնածուի մասին։

է. Մ.— Իհարկե, ոչինչ, քանի որ անձնապես ես նրան չեմ ճանաչում, սակայն պետք է նշեմ, որ հատկապես վերջին տարիներին շատերին է հուզում կրթության վիճակը, սա, իհարկե, լավ է, բայց վատը նրանում է, որ շատերին թվում է, թե եթե ընդամենը սովորել են դպրոցում, ապա լավ են հասկանում դպրոցը։ Եվ քիչ չեն դեպքերը, երբ, ներեցեք արտահայտությանս, դիլետանտները (իսկ մեզ միշտ էլ զեկավարել են լավագույն դեպքերում դիլետանտները, ձեզ օրինակ վերջին տարիների դպրոցական ռեֆորմները), ցանկանում են հեղաշրջում անցկացնել այդ ասպարեզում։ Իհարկե, ցանկությունը բարի է, բայց դա, երևի, անհնար է, չէ՞ որ մենք ապրում ենք 20-րդ դարում և յուրաքանչյուր գործ խոր մասնագիտացում է պահանջում, իսկ մանկավարժությունը մարդկության պատմության մեջ ամենադասական մասնագիտություններից մեկն է։ Ներկայումս դժվար է հասկանալ, թե ինչ է նշանակում, որ պահել է ազգային ավանդույթները։

ԹՂԹ.— Ի՞նչ կարող եք ասել, խորհրդարանում առաջադրված լուսավորության նախարարի նոր թեկնածուի մասին։

է. Մ.— Իհարկե, ոչինչ, քանի որ անձնապես ես նրան չեմ ճանաչում, սակայն պետք է նշեմ, որ հատկապես վերջին տարիներին շատերին է հուզում կրթության վիճակը, սա, իհարկե, լավ է, բայց վատը նրանում է, որ շատերին թվում է, թե եթե ընդամենը սովորել են դպրոցում, ապա լավ են հասկանում դպրոցը։ Եվ քիչ չեն դեպքերը, երբ, ներեցեք արտահայտությանս, դիլետանտները (իսկ մեզ միշտ էլ զեկավարել են լավագույն դեպքերում դիլետանտները, ձեզ օրինակ վերջին տարիների դպրոցական ռեֆորմները), ցանկանում են հեղաշրջում անցկացնել այդ ասպարեզում։ Իհարկե, ցանկությունը բարի է, բայց դա, երևի, անհնար է, չէ՞ որ մենք ապրում ենք 20-րդ դարում և յուրաքանչյուր գործ խոր մասնագիտացում է պահանջում, իսկ մանկավարժությունը մարդկության պատմության մեջ ամենադասական մասնագիտություններից մեկն է։ Ներկայումս դժվար է հասկանալ, թե ինչ է նշանակում, որ պահել է ազգային ավանդույթները։

ԹՂԹ.— Դուք ասեցիք, որ «Գիտական աշխարհ» հրատարակվող գիտական կոչեցյալներից քանի՞սն են իսկապես գիտական, հազար ու մի եղկլաբաններից քանի՞սն են իսկական գրող, դասամատյան բռնող և դասարան մտնող բազմաթիվ սուբյեկտներից քանի՞սն են իսկական ուսուցիչ և այլն։

Եվ այստեղից էլ՝ բոլոր դժվարությունները... Ես դեռ չեմ խոսում երանց մասին, ովքեր չեն կարողացել ուսուցիչ լինել, դարձել են ուսումնական համակարգի զեկավարներ։ Այս է պատճառը, որ ուսուցիչների մեծամասնությանը, իմ կարծիքով, շպիտի թողնել ոչ միայն դասարաններ, այլև ընդհանրապես դպրոց մտնել։ Ներկայումս լավ ուսուցչի համար դժվար է դասավանդել, և երանցից շատերը հեռացել են դպրոցից...

Բայց սա չի նշանակում, որ մեր դպրոցներում լավ ուսուցիչներ չկան, ընդհանրապես, նրանք բազմաթիվ են, սակայն նրանց տեղը չգիտենք, որովհետև կոչումներ չունեն, գիտական աստիճաններ չունեն, զեկավարների համար հիմնականում անհասկանալի տարբեր են։ Չե՞ք հավատում հարցրեք աշակերտներին։

ԹՂԹ.— Ի՞նչ եք կարծում, ի՞նչը պիտի ճանդիսանա մեր ապագա ուսուցչի հիմնական նպատակը։

է. Մ.— Ամենից առաջ՝ մտածել սովորեցնել։ Ես այս մասին գրել եմ տարիներ առաջ, սակայն պետք է նշեմ նաև, որ ուսուցչին պետք է հնարավորություն տալ կատարելու այս գերագույն առաքելությունը։ Ինձ հիշատակեցք, ես աշխատել եմ նաև այն ժամանակ, երբ ուսուցիչը 1 բոպեի համար ստացել է մեկ կոպեկ, այժմ նա ստանում է լավագույն դեպքում 1 բոպեի համար 2 կոպեկ (հաշվարկված է նաև դասին նախապատրաստվելը)։ Հավատացեք, ուսուցիչը այս վիճակում ոչ միայն չի կարող մտածել սովորեցնել, այլ նաև կդադարի մտածելուց։

ԹՂԹ.— Շնորհակալություն հայտնելուց առաջ «Արցախկանչի» ընթերցողների կողմից խնդրում եմ մեր թերթի էջերում առաջիկայում ևս անդրադառնալ ազգային դպրոցի և առնասարակ ուսուցման համակարգի ճարտերին։

— է. Մ.— Խնդրեմ։ Չէ՞ որ «Արցախկանչը» նաև իմ թերթն է։

Հարցազրույցը վարեց
Մ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԸ